յունաբերությունից ստացված շահույթի 20-25% -ը և ուղղվի Լոռու մարզի տնտեսության զարգացմանը (ստեղծելով նոր աշխատատեղեր, ինովացիոն ձեռնարկություններ), ապա 15-20 տարում հնարավոր է ապահովել այնքան աշխատեղեր, որքան ընդգրկված են հանքարդյունաբերությունում:

Մարզում անհրաժեշտ է կառուցել նոր, ժամանակակից պղնձաձուլարան, որտեղ հնարավոր կլինի ստանալ մաքուր պղինձ, ծծմբաթթու, ծծումբ, պղնձարջասպ, թափոններից կորզել ոսկին, արծաթը և ամենակարևորը, զգալի կրճատել ծխի արտահոսքը, որը Ալավերդի քաղաքում լուրջ բնապահպանական խնդիրներ է առաջացնում: Ֆաբրիկային կից կարելի է հիմնել փոքր ցեխեր՝ ստացված ապրանքների պահեստավորման, փաթեթավորման համար, որը հավելյալ աշխատատեղեր կստեղծի:

Անհրաժեշտ է մեծացնել առողջապահությանը տրամադրվող գումարների ծավալը, մասնավորապես՝ ավելացնել ժամանակակից ախտորոշիչ լաբորատորիաներով հիվանդանոցների հիմնումը:

Բնապահպանական տեսանկյունից՝ անհրաժեշտ է մարզում գործող պոչամբարներից արտահոսող աղտոտված ջրերի հնարավոր ֆիլտրումը ժամանակակից մաքրման կայանների ստեղծմամբ: Հնարավորինս մեծացնել կանաչ տարածքները մարզում, արգելել անտառահատման երևույթները:

Այսպիսով, հանքարդյունաբերությունը Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է, իսկ արդյունաբերության՝ հիմնական մասը: Նրանից ստացված եկամուտները ունակ են լուծելու մարզում ծառացած տնտեսական, առողջապահական, սոցիալական, բնապահպանական և այլ խնդիրներ:

## Գրականություն


1. Ավագյան Հ. Ս. Հազվագյուտ տարրերն ու հազվագյուտ հողատարրերը Հայաստանի Հանրապետության հանքավայրերում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014թ., 171 էջ:
2. http://vm.am/
3. https://news.am/arm/news/84116.html
4. http://www.globalmetals.am
5. http://aarhus.am/Expert_2015/2-Expertise%20Akhtala.pdf
6. http://armstat.am/am/
7. http://www.mtad.am/files/docs/554.




## Горная промышленность и ее роль в экономике Лорийской области

*Нерсесян Сурен*


РЕЗЮМЕ

***Ключевые слова***: *эксплуатация, горная промышленность, структурно-тектоническая зона, Сомхето-Карабахская зона, флотация, концентрат, технология*

В статье рассматривается значение горной промышленности в экономике Лорийской области, возможности прогресса и частичное использование доходов в сфере других отраслей. Горная промышленность составляет основную часть промышленности области. В данный момент в ее рамках создано 4000 рабочих мест. Но эта отрасль экономики создала и огромные экологические проблемы. Было уничтожено несколько сотен гектаров сельскохозяйственных угоди и лес, реки загрязнены химикатами и тяжелыми металлами. От выбросов вредных газов Алавердского металлургического завода вырос уровень сердечно-дыхательных, аллергических и онкологических заболеваний.


## The Mining Industry of the Lori Region and its Role in the Economy of the Latter

*Nersesyan Suren*


SUMMARY

***Key words:*** *exploitation, mining industry, structural-tectonic zone, Somkheto-Karabakh zone, flotation, concentrate, technology*

The article highlights the sizes of the Lori region mining industry and its role in the GDP. Currently the proportion of the mining industry makes up more than the half of the region-wide industry. 4000 jobs have been created within its frameworks and it has the tendency to increase. But this branch of economy causes serious environmental problems. A few hundred hectares of agricultural lands were destroyed in the region; rivers are polluted with heavy metals and chemicals.